



**Սամվել Հովասափյան, Բեռլին. 26 Հուլիս 2018**

Ես չեի կարող այս նամակը չգրել ձեզ, չնայած գիտեմ, որ դուք այն անտեսելու եք: Իսկ եթե պատահաբար այն ձեր ձեռքն ընկնի, ապա չեք կարդալու, որովհետև այն ժամանակավրեպ եք դիտելու: Բացի այդ, իշխանական գահի կորուստի դառնությունը ձեզ թույլ չի տալու, լսել անցյալի ձեր նախագահական ուղու բուն եությունը բացահայտելու փորձերը: Իսկ եթե կարդաք էլ, ապա կարծում եմ, որ այն ձեզ բոլորովին չի հուզելու:



**Լեւոն, Ալեքսանտր եւ Սերժ Սարգսյան**

Բայց այս ամենը իմանալով ինչու եմ դարձյալ բաց նամակով դիմում ձեզ: Անցյալում, դա՛ անզորության, անելանելիության զգացումն էր, որ ինձ մղել էր այդ քայլի, հիմա՝ զարմանքի, հիասթափության: Որովհետև նոր է միան մեզ պարզ դառնում, թե որքա՛ն է իջել՝ իշխանական կարևոր լծակներին տիրող, Հայաստանի վերնախավը:

**Սամվել Հովասափյան, Բեռլին. 26 Հուլիս 2018**

Ես չեի կարող այս նամակը չգրել ձեզ, չնայած գիտեմ, որ դուք այն անտեսելու եք: Իսկ եթե պատահաբար այն ձեր ձեռքն ընկնի, ապա չեք կարդալու, որովհետև այն ժամանակավրեպ եք դիտելու: Բացի այդ, իշխանական գահի կորուստի դառնությունը ձեզ թույլ չի տալու, լսել անցյալի ձեր նախագահական ուղու բուն եությունը բացահայտելու փորձերը: Իսկ եթե կարդաք էլ, ապա կարծում եմ, որ այն ձեզ բոլորովին չի հուզելու:



**Լեւոն, Ալեքսանտր եւ Սերժ Սարգսյան**

Բայց այս ամենը իմանալով ինչու եմ դարձյալ բաց նամակով դիմում ձեզ: Անցյալում, դա՛ անզորության, անելանելիության զգացումն էր, որ ինձ մղել էր այդ քայլի, հիմա՝ զարմանքի, հիասթափության: Որովհետև նոր է միան մեզ պարզ դառնում, թե որքա՛ն է իջել՝ իշխանական կարևոր լծակներին տիրող, Հայաստանի վերնախավը:

Հետո՝ բերկրանքի ցգացումն է, որ հայ ժողովուրդը, Հայաստանի երիտասարդությունը կարողացավ միանալ, միաձուլվել և կատարել անհրանինը, վերջ տալ բռնության և անօրինականության այն համակարգին, որը Ռոբերտ Քոչարյանը և դուք էիք ստեղծել, որի ռեալ, հանցավոր եությունը և իրական չափերը նոր են հանրության առաջ բացահայտվում: Եվ ինչ խոսք, դուք կարողանում էիք օտարների համար այդ բոլորը վարպետորեն քողարկել, պարուրել՝ գեղեցիկ խոսքերով...

«Կաշառքը զգվելի բան է»:



հուսահատվեցինք, որովհետև վկան ենք և տեսնում ենք, թե որքան է հանցանքի մեջ ընկղմվել այդ մարդը, այդ հոգին, իր շուրջը հավաքելով՝ այդ ասող պատեհապաշտների ամբողջ մի բազմություն և տիրանալով՝ ադամանդների, ոսկիների, զարդեղենների, թանկարժեք մեքենաների, մարդ սպանող զենքերի, և «մեղա Աստված», թմրադեղերի, որոնց վերավաճառելով անդունդ է գլորել բազմաթիվ երիտասարդների, ովքեր որ զենքը ունենին պաշտպանելու էին հենց նրանց հայրերի, մայրերի ու հարազատների անդորրը:

Այո, այո, այս ամենը գիտենալով, դուք եղբայրներով այլևս ինչպե՞ս եք կարողացել նայել ձեր մերձավորների, ընդհանրապես ձեր շրջապատի մարդկանց աչքերի մեջ: Գիտեմ, որ հնարավոր չէ ձեզանից լսել, ուրեմն պետք է կռահումներ անել, ճանաչելու համար մարդու ձեր տեսակը: Հասկանալու համար, թե դուք մարդկային ի՞նչ չափանիշներով եք առաջնորդվել, ի՞նչ սկզբունքներով եք անգամներ ձեր ձեռքը ավետարանի վրա դնելով, երդվել այն, ինչը որ չպետք է երդվեիք: Որովհետև դուք իրավունք չունեիք երդվելու, դուք լավ գիտեիք, որ այդ ձեր իրավունքը չէր, գիտեիք, որ ձեր այդ ձեռքը ավետարանի վրա դնելով և կեղծ ու փուչ երդումներ տալով, խաբում եք նույնիսկ ինքներդ ձեզ, ձեր ընտանիքներին, մերձավորներին, հարազատներին և ամբողջ մի ժողովրդի:

Մենք շատ բան կարող էինք երևակայել, բայց որ դուք երեք եղբայրներով, ոչ միայն ստեղծել, սնուցել ու գլխավորել եք հանցագործների մի ամբողջ բանակ, այլ ձեր զավակներին ու դուստրերին եք հանցագործ դարձրել, դա վեր էր մեր բոլորի պատկերացումներից: Հիշում եմ, թե դուք Բեռլինում որքան ձեզ վիրավորված ձևացրիք, այն բանից հետո, երբ հարց բարձրացվեց, որ Հայաստանում անօրինակություններ կան:

Մարդկային պատմությունը մեզ ուսուցանել է, որ կարելի է ճշմարտությունը ժամանակավոր բռնաբարել, խեղաթյուրել, բայց ընդմիշտ վերացնել չի կարելի: Դուք այս հասարակ բանաձևը պետք է որ սերտած լինեիք, և չգնայիք ձեր նախորդների հետքերով, բայց գնացիք և ամենաահավորը՝ կատարելագործեցիք չարիքը, անօրինականությունները, այդպիսով՝ տնավեր, թափառական դարձնելով հարյուրհազարների, աղքատության մատնեցիք սեփական ժողովրդի մեկերորդին: Եվ ուշացումով կատարվեց այն, ինչը որ պետք է կատարվեր, ժողովրդի ցասումը ձեզ ստիպեց, որ հրաժարական տաք:

Գիտեմ, որ դուք շատ կցանկանայիք, կախարդական գավազանի մի հարվածով, կանխել այն բոլոր հանցագործների բացահայտումը, ձեր մեծավորների «քաջագործությունները», որոնք այսօր ի հայտ են գալիս: Բայց ավա՛ղ, չեք կարող: Եվ լավ է, որ չեք կարող: Բայց մեր մեջ հետաքրքրասեր մարդը ցանկանում է իմանալ: Արդյո՞ք դուք գիտեիք այդ ամենի մասին, ձեր եղբայրների, Մանվելների, նրանց որդիների՝ հանցագործությունների մասին, թե ձեր ապաշնորհ դատախազի, ԱԱԾ-յան պաշտոնյաների նման կհավակնեք, որ չգիտեիք:

Բաց ո'չ: Մենք այդքան միամիտ չե'նք, որ հավատանք այդ և գուշակում ենք, որ դուք էլ, աշխարհի բոլոր բռնակալների նման, զայրութով ձեր բռունցքն եք սեղմում և զղջում, որ ժամանակին թույլ գտնվեցիք, և հեղափոխությունը չիսեղդեցիք իր բարուրի մեջ: Չէ որ դուք ընդունակ էիք և կարող էիք դա անել: Գուշակում եմ, որ դուք միայն դա եք համարում ձեր իշխանական տարիների ամենասարսափելի սխալը...

Սամվել Հովասափյան, Բեռլին. Հուլիս 2018

